

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2011Թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ*

ԹԻՎ 1

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2011թ. հունվարին


(%)

	2011թ. հունվարը		
	2010թ. դեկտեմբերի նկատմամբ	2010թ. հունվարի նկատմամբ	2005թ. նկատմամբ
Սպառողական գների ինդեքսը- ընդամենը	102.8	110.6	141.5
այդ թվում՝			
Սպառման ապրանքներ	103.9	113.4	142.1
Պարենային ապրանքներ	105.3	117.1	151.9
Ոգելից խմիչք, ծխախոտ	100.1	101.5	104.0
Ոչ պարենային ապրանքներ	100.5	105.2	126.7
Ծառայություններ	100.2	104.6	140.3

Սպառողական գներ: 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 2.8% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 4.9% գնաճով: Ոչ պարենային ապրանքների գները և ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում աճել են համապատասխանաբար 0.5% և 0.2%-ով:

Սպառողական գների հավելաճը 2002-2011թթ. հունվարին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Հանրապետության դիտարկվող քաղաքներում 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է սպառողական գների 2.4-3.5% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Եղեգնաձոր և Կապան քաղաքներում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 2.8%-ով:

Պարենային ապրանքների գներ: 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է պարենային ապրանքների 5.3% գնաճ, ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել ձկնամթերքի, ձվի, մրգի, բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբերի 8.0-24.9% գնաճը: Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 11-ում նշված ժամանակահատվածում գրանցվել է 0.3-24.9% գնաճ, իսկ մյուս 2-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Մրգի ապրանքախմբում՝ 2011թ. հունվարին 2010թ. հունվարի համեմատ արձանագրվել է 38.9%, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 24.9% գնաճ: 2011թ. հունվարին դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է կիտրոնի 2.3%, խաղողի 6.6%, տանձի 15.4%, նռան 17.7%, մանդարինի 18.5%, ադամաթզի 19.0%, արքայանարնջի 48.8%, խնձորի 55.7% գնաճ: Հանրապետության դիտարկված քաղաքներում մրգի գներն աճել են 10.7-35.2%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Կապանում: Մայրաքաղաքում մրգի գներն աճել են 28.9%-ով:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում¹ 2011թ. հունվարին 2010թ. հունվարի համեմատ արձանագրվել է 29.0%, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 24.3% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է խառը կանաչեղենի 25.8%, լոլիկի 35.4%, վարունգի 38.5%, կանաչ սոխի 43.8%, կաղամբի 52.9% գնաճով: 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սխտորի 2.3%, գլուխ սոխի 5.5%, ճակնդեղի 7.8%, գազարի 19.7%, կարտոֆիլի 20.0% գնաճ: Հանրապետության դիտարկված քաղաքներում բանջարեղեն և կարտոֆիլ ապրանքախմբի գներն աճել են 12.9-34.6%-ով, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Արտաշատում: Մայրաքաղաքում բանջարեղեն և կարտոֆիլ ապրանքախմբի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ աճել է 24.6%-ով:

2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ մրգի, բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբերի ընդհանուր գնաճը կազմել է 24.5%: Վերոհիշյալ ապրանքախմբերը սպառողական զանրյուղում ունենալով 7.28% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 1.7 տոկոսային կետով:

2011թ. հունվարին 2010թ. հունվարի համեմատ ձվի հանրապետական միջին գինն աճել է 36.4%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 8.6%-ով: 2011թ. հունվարին ձվի հանրապետական միջին գինը կազմել է 66.5 դրամ (ամենաբարձր գինը գրանցվել է ք. Եղեգնաձորում՝ 83.3 դրամ, իսկ ամենացածրը՝ մայրաքաղաքում՝ 63.6 դրամ)՝ 2010թ. դեկտեմբերին արձանագրված 61.3 դրամի դիմաց: 2010թ. դեկտեմբերի 30-ին ձվի միջին հանրապետական գինը կազմել է 84.0 դրամ (ամենաբարձր գինը գրանցվել է ք. Գյումրիում՝ 108.3 դրամ, ամենացածրը՝ ք. Արտաշատում՝ 79.0 դրամ, իսկ ք. Երևանում այն կազմել է 81.7 դրամ): 2011թ. հունվարի 10-ին ձվի միջին հանրապետական գինը կազմել է 61.7 դրամ, ընդ որում, ամենաբարձր գինը գրանցվել է ք. Եղեգնաձորում՝ 90.0 դրամ, ամենացածրը՝ ք. Գյումրիում՝ 57.1 դրամ: Հունվարի 20-ին ձվի միջին հանրապետական գինը կազմել է 59.8 դրամ, ընդ որում, ամենաբարձր գինը գրանցվել է ք. Կապանում 77.1 դրամ, իսկ ամենացածրը՝ Գյումրի և Վաղարշապատ քաղաքներում՝ 57.1 դրամ:

Մսամթերքի ապրանքախմբում 2011թ. հունվարին 2010թ. հունվարի համեմատ գրանցվել է 17.6%, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 3.2% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է տավարի մսի 6.0% գնաճով: Խոզի և ոչխարի մսերի գները 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում աճել են համապատասխանաբար 1.3% և 1.5%-ով: Հանրապետության դիտարկված քաղաքներում 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է մսամթերքի 1.5-9.2% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 3.0%-ով:

2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է ոգելից խմիչքի և ծխախոտի, հացամթերքի, կենդանական և բուսական յուղերի, հրուշակեղենի, կաթնամթերքի, սուրճի, թեյի, կակաոյի, շաքարավազի 0.1-0.9% գնաճ, իսկ այլ մթերքի և ոչ ոգելից խմիչքի գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.5% գնաճ, ինչը հիմնականում բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 3.2% և 3.0% գնաճի արդյունք է: 2011թ. հունվարին 2010թ. հունվարի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են համապատասխանաբար 6.2% և 11.5%-ով, իսկ 2005թ. համեմատ՝ 16.8% և 31.3%-ով:

2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է կահույքի, խոհանոցային սպասքի, անձնապիտո, գեղահարդարման, ոսկերչական ապրանքների, դեղամիջոցների, տեքստիլեղենի, մշակույթի ապրանքների 0.1-5.2% գնաճ: Կոշիկեղենի գները նշված ժամանակահատվածում նվազել են 2.3%-ով, հագուստինը և գործվածքինը՝ 0.8%-ով, գորգեղենինը՝ 0.7%-ով, շինանյութերինը՝ 0.2%-ով, կենցաղային էլեկտրաապրանքներինը՝ 0.1%-ով, այգեգործական ապրանքներինը՝ 0.1%-ով, իսկ դիտարկվող մյուս ապրանքախմբերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Հանրապետության դիտարկված քաղաքներում 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-1.4% գնաճ, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.3%-ով:

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է սակագների 0.2% հավելաճ, ինչը հիմնականում հանգստի կազմակերպման (0.3%) և տրանսպորտի (1.8%) ծառայությունների սակագների հավելաճի արդյունք է:


¹ 2011թ. հունվարին 2010թ. հունվար և դեկտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների և գների տոկոսային փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

Կենցաղային բնույթի, կրթության համակարգի, հանրային սննդի ծառայությունների ոլորտում նշված ժամանակահատվածում արձանագրվել է սակագների 0.1% հավելում: Մշակույթի ոլորտի ծառայությունների սակագները նվազել են 0.1%-ով, իսկ բնակարանային-կոմունալ, բուժսպասարկման, կապի, իրավական ու բանկային ծառայությունների սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Հանրապետության դիտարկված 4 քաղաքներում 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է սակագների 0.1-0.5% հավելում, մեկուսի՝ 0.1% նվազում, մյուս 6 քաղաքներում ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2010թ. դեկտեմբերի 30-ին, 2011թ. հունվարի 10-ին և 20-ին կամ մոտակա օրերին Երևան քաղաքում և հանրապետության մարզերի 11 բնակավայրերում 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2011թ. հունվարին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Արտարժույթի շուկա: 2011թ. հունվարին 2010թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 2.8% և 1.2% հավելում (ԱՄՆ դոլարն արժևորվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 1.7% հավելումն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.8% նվազումով: 2011թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 364.95 դրամ, ինչը 3.3%-ով ցածր է 2010թ. հունվարի համապատասխան ցուցանիշից (377.53 դրամ):

Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական միջին գները և գների ինդեքսները ՀՀ-ում և Երևան քաղաքում

	Չափի միավորը	Գների ինդեքսը ՀՀ-ում, %		այդ թվում՝				
		2011թ.		Քաղաք Երևան				
		հունվարը		Միջին գին (դրամ)		գների ինդեքս, %		
		2010թ. դեկտեմբերի նկատմամբ	2010թ. հունվարի նկատմամբ	2010թ.		2011	2011թ. հունվարը	
				Հունվար	Դեկտեմբեր	Հունվար	2010թ. դեկտեմբերի նկատմամբ	2010թ. հունվարի նկատմամբ
Միրգ, ընդամենը		124.9	138.9	x	x	x	128.9	124.1
<i>այդ թվում՝</i>								
Խնձոր	կգ	155.7	288.5	480	799	1390	174.0	289.6
Տանձ	“-“	115.4	178.9	771	1176	1220	103.7	158.2
Խաղող	“-“	106.6	128.0	667	736	755	102.6	113.2
Նուռ	“-“	117.7	89.5	1559	1185	1374	115.9	88.1
Արքայանարինջ (կորոյով)	“-“	148.8	106.3	703	486	754	155.1	107.3
Արևադարձային պտուղ (նարինջ)	“-“	96.5	100.5	713	773	744	96.2	104.3
Մանդարին	“-“	118.5	117.1	560	562	647	115.1	115.5
Կիտրոն	հատ	102.3	99.4	200	201	201	100.0	100.5
Ադամաթուզ (բանան)	կգ	119.0	91.3	1051	832	990	119.0	94.2
Բանջարեղեն և կարտոֆիլ, ընդամենը		124.3	129.0	x	x	x	124.6	125.5
<i>այդ թվում՝</i>								
Կաղամբ	կգ	152.9	151.7	119	117	186	159.0	156.3
Լոլիկ	“-“	135.4	108.4	1167	931	1270	136.4	108.8
Վարունգ	“-“	138.5	116.9	1541	1393	1894	136.0	122.9
Գլուխ սոխ	“-“	105.5	103.7	421	413	427	103.4	101.4
Գազար	“-“	119.7	175.3	158	240	281	117.1	177.8
Սեղանի ճակնդեղ	“-“	107.8	133.1	173	212	214	100.9	123.7
Սխտոր	“-“	102.3	96.0	1902	1882	1925	102.3	101.2
Սմբուկ	“-“	127.9	87.6	1554	1102	1364	123.8	87.8
Կանաչ պղպեղ	“-“	146.2	78.9	2437	1384	2146	155.1	88.1
Սունկ	“-“	106.2	106.9	1617	1574	1671	106.2	103.3
Կարտոֆիլ	“-“	120.0	229.9	114	222	269	121.2	236.0

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում
2010թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին՝

(%)

	2010 թ.												2010թ. դեկտեմբերը 2009թ. դեկտեմբերի նկատմամբ
	հունվարը	փետրվարը	մարտը	Ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոստոսը	սեպտեմբերը	հոկտեմբերը	նոյեմբերը	դեկտեմբերը	
<i>նախորդ ամսվա համեմատ</i>													
Ավստրիա	99.6	100.2	101.0	100.2	99.9	100.0	99.5	100.3	100.4	100.4	100.0	100.7	102.2
Բելգիա	98.6	102.3	100.5	100.5	100.4	100.0	98.2	102.0	100.1	100.1	100.1	100.6	103.4
Բուլղարիա	100.6	100.3	100.4	101.2	100.0	99.6	100.5	100.2	100.2	100.2	100.5	100.8	104.4
Հունգարիա	101.5	100.2	100.6	100.9	100.7	100.2	100.0	99.5	99.9	100.4	100.2	100.4	104.6
Գերմանիա	99.4	100.4	100.6	99.9	100.1	100.0	100.3	100.1	99.8	100.1	100.1	101.2	101.9
Հունաստան	99.2	99.4	103.1	101.2	100.8	99.8	99.6	99.3	101.9	100.1	100.2	100.5	105.2
Դանիա	100.3	100.9	100.7	100.2	99.9	99.9	99.9	100.5	100.4	99.9	100.1	100.1	102.8
Իռլանդիա	99.3	100.2	100.1	100.0	100.3	99.9	99.9	100.2	99.8	100.1	99.8
Իսպանիա	98.9	99.8	100.7	101.1	100.2	100.2	99.6	100.3	100.0	100.9	100.5	100.6	102.9
Իտալիա	98.5	100.0	101.5	100.9	100.1	100.1	99.1	100.2	100.6	100.7	100.0	100.4	102.1
Կիպրոս	98.6	100.3	100.9	101.1	100.1	100.3	99.2	100.9	101.0	100.6	99.3	99.8	101.9
Լատվիա	100.2	100.0	100.5	100.9	100.0	100.4	100.2	99.3	100.4	100.3	100.2	100.2	102.4
Լիտվա	101.2	99.9	100.3	100.4	100.2	100.0	100.0	99.8	100.6	100.4	100.0	100.8	103.6
Լյուքսեմբուրգ	99.4	101.1	100.7	100.4	100.3	99.9	99.6	101.0	100.0	100.1	100.1	100.5	103.1
Մալթա	99.5	100.3	101.4	102.6	101.2	99.9	100.6	101.0	99.3	99.4	98.5	100.5	104.0
Նիդերլանդներ	99.7	100.9	101.5	100.3	99.9	99.3	99.4	100.1	100.7	100.2	99.9	99.7	101.8
Լեհաստան	100.4	100.4	100.3	100.4	100.3	100.3	99.8	99.7	100.5	100.3	100.2	100.3	102.9
Պորտուգալիա	99.4	100.0	101.2	100.4	100.2	100.2	100.4	99.9	99.9	100.3	100.1	100.4	102.4
Ռումինիա	101.7	100.2	100.2	100.3	100.1	100.2	102.6	100.2	100.6	100.6	100.5	100.5	107.9
Սլովակիա	100.1	100.0	100.1	100.4	100.1	100.0	100.1	99.9	100.0	100.0	100.3	100.2	101.3
Սլովենիա	99.4	100.3	101.0	101.1	100.4	100.2	99.4	100.1	99.6	100.1	100.3	100.1	102.2
Միացյալ Թագավորություն (Մեծ Բրիտանիա)	99.8	100.4	100.6	100.6	100.2	100.1	99.8	100.5	100.0	100.3	100.4
Ֆինլանդիա	100.1	100.4	100.6	100.3	99.8	100.2	99.4	100.4	100.4	100.4	100.2	100.5	102.8
Ֆրանսիա	99.8	100.6	100.5	100.3	100.1	100.0	99.7	100.2	100.0	100.1	100.1	100.5	102.0
Չեխիայի Հանրապետություն	101.2	100.1	100.2	100.4	100.2	100.0	100.3	99.7	99.8	99.7	100.2	100.5	102.3
Շվեդիա	99.8	100.6	100.3	99.9	100.1	99.9	99.6	99.9	100.8	100.3	100.2	100.6	102.1
Էստոնիա	100.3	100.3	101.2	100.5	100.3	100.4	100.2	100.0	100.8	100.6	100.3	100.5	105.4
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ -27)	99.5	100.3	100.8	100.5	100.2	100.0	99.8	100.2	100.2	100.3	100.2	100.5	102.6
Հայաստան	101.7	100.3	100.8	101.3	101.0	99.2	99.2	101.3	99.8	101.0	101.6	101.8	109.4
Ռուսաստան	101.6	100.9	100.6	100.3	100.5	100.4	100.4	100.6	100.8	100.5	100.8	101.1	108.8
Բելառուս	100.8	100.5	101.1	100.7	100.8	100.2	100.3	100.6	101.6	101.1	100.9	101.0	109.9
Ուկրաինա	101.8	101.9	100.9	99.7	99.4	99.6	99.8	101.2	102.9	100.5	100.3	100.8	109.1
Ղազախստան	101.4	100.9	100.7	100.7	100.6	100.2	100.2	100.0	100.6	100.9	100.8	100.7	107.8
Ղրղզստան	101.3	102.5	101.0	99.0	100.2	100.1	101.0	101.9	102.9	102.6	102.9	102.4	119.2
Մոլդովա	102.3	102.1	100.7	100.3	100.1	99.5	99.4	99.1	100.8	101.5	100.6	101.3	108.1
Տաջիկստան	100.7	100.5	100.4	100.2	100.4	100.6	100.9	101.0	101.9	101.0	100.9	100.9	...
Ադրբեջան	100.5	101.1	101.3	100.0	99.8	99.4	99.8	100.7	100.9	100.9	101.8	101.4	...
Վրաստան	101.1	101.5	99.8	100.2	99.6	99.7	99.8	102.3	103.1	102.0	101.1	100.5	111.2
Կանադա	100.3	100.4	100.0	100.3	100.3	99.9	100.5	99.9	100.2	100.4	100.1
Նորվեգիա	99.9	101.5	100.5	100.2	99.5	99.9	99.4	99.6	100.7	100.1	100.2	101.3	102.7
Բրազիլիա	100.7	100.8	100.5	100.6	100.4	100.0	100.0	100.0	100.4	100.8	100.8	100.6	105.9
Կորեայի Հանրապետություն	100.4	100.4	100.3	100.5	100.1	99.8	100.3	100.3	101.1	100.2	99.4	100.6	102.7
ԱՄՆ	100.3	100.0	100.4	100.2	100.1	99.9	100.0	100.1	100.1	100.1	100.0	100.2	101.5
Թուրքիա	101.8	101.4	100.6	100.6	99.6	99.4	99.5	100.4	101.2	101.8	100.0	99.7	106.4
Ճապոնիա	99.8	99.9	100.3	100.0	100.1	100.0	99.5	100.3	100.3	100.4	99.7

... Տվյալները բացակայում են:

¹ Տեղեկատվությունը պատրաստվել է Եվրոստատի, ազգային վիճակագրական ծառայությունների կայք էջերում, ինչպես նաև ԱՄՆ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտների պահանջներին համապատասխան ԱՄՆ-ի կայք էջում գետեղված ցուցանիշների հիման վրա:

<<Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2011թ. հունվար-փետրվարին>> մամուլի հաղորդագրության հրատարակման ժամկետը, համաձայն <<2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի>>, նախատեսված է 2011թ. մարտի 1-ին (տես՝ ծածկագիր 1300-301, Հավելված 3, էջ 62):